Գ.

ԽԱՂԲԱԿՅԱՆՑ ՆՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

Յե՞րբ թողեց Վասակ Խաչենը և վո՞րոնք են նոր իշխանության սահմանները։

Ըստ Մխիթար Այրիվանեցու Վասակի տեղափոխությունը կատարված պիտի լինի 1201 թվին. «Վասակ որդի Հաղբակայ և երեք որդիքն իւր՝ Պապաքն, Մկդէմն և քաջն Պռօշ, եկեալ ի Խաչենոյ, բազում աւերութիւնս ցուցին յայլասեռս և բազում բարութիւնս առ ազգս քրիստոնէից»։ Այս նույն թվականին Վարդան նշանակում է Բջնիի գրավումը, իսկ յերկու տարի հետո Դվինի, Զաքարյան յեղբայրների ձեռքով**. Բջնիի արևելյան մասը Կեչառվաց վանքով Խաղբակյանների սեփականությունն եր և նույն իսկ Վասակ Խաղբակյանի սիրելի վայրը, ուր նա շինեց յուր գողտրիկ և գեղեցիկ կաթուղիկե եկեղեցին. ինչպես Որբելյաններին շնորհվել եր Սյունիքը՝ Վորոտն ու Բարկուշատը՝ Լիպարտի ցույց տված ոժանդակության համար այդ գավառների նվաճման գործում***, նույնը պետք է կատարված լինի և Խաղբակյանց հետ. Կեչառույքը և Վայոց ձորի մի մասը վարձատրություն եր Վասակին յերկու գավառների գրավման գործակցության համար. գոնե հաստատ է այդ Վայոց ձորի նկատմամբ։ Արատեսի մի արձանագրությամբ (պատկ. 3. Հավել. Ա. 3)՝ Վասակն եր նվաճել Յեղեգյաց ձորի ամրոցները, իսկ ըստ Որբելյանի նաև Հրաշկաբերդը[1]. Վայոց ձորի նվաճման հետ եր կապված նաև Դվինը յուր աշխարհագրական դիրքի համեմատ։ Այսպիսով յերկու հեղինակներն իրար լրացնում են և հաստատում, վոր 1201—1203 թ. թ. արդեն Վասակ Խաղբակյան գործում է յուր նոր իշխանության սահմաններում, վորպես գործակից և ստորադրյալ Զաքարյանների։*

Յե՞րբ վերջացան պատերազմական գործողությունները և յե՞րբ Վասակ կուսակալ նշանակվեց նոր իշխանության մեջ, ճիշտ տարեթիվը վորոշել չենք կարող։ Արատեսի վերոյիշյալ արձանագրության համեմատ 1214 թվին նա արդեն «կողմնապահ» եր «ի Գառնոյ մինչև ի Բարգուշատ»։ Կեչառույքի կաթողիկեն էլ շինված է նույն թվականին, ասել է, թե Բջնիի այդ մասն էլ նորան եր հանձնված արդեն։ Բայց Որբելյանի մի քանի ցուցումների համաձայն կողմնապահության հաստատությունը պետք է ավելի վաղ կատարված լինի. Սյունիքը նվաճված է 1211 թվին և հանձնված Լիպարիտ Որբելյանին, յերբ նա ստացել եր արդեն «զՀրաշկաբերդ իւր գաւառովն եւ այլ բազում գեօրէս ի Վայոց ձոր ....»[2]։ Մի ուրիշ արձանագրությունից յերևում է, վոր Զաքարիա սպասալարը 1211 թվին Նորավանքին յետ է դարձրել Ագարակի ձոր գյուղը, ըստ Որբելյանի Լիպարիտի խնդրանոք, յերբ ուրեմն, նա տեր եր արդեն վանքին և գավառին։ Արդ, Որբելյանց և Խաղբակյանց կողմնակալությունները նշանակվել են միասին Գեորգի Լաշայի և Իվանե աթաբեկի կողմից, ասել է, 1203—1210 թ. թ. մեջ.. «Եւ կացուցանեն թագաւորն Լաշայ և աթաբեկն Իւանէ զԼիպարիտն կողմնակալ այսմ աշխարհի, նմանապէս և զմիւս իշխանն, զամենօրհնեալն զՎասակ Խաչենեցի, զհայրն քրիստոսասէր և բարեպաշտ պարոնին Պռոշայ, կացուցանեն կողմնակալ ի Վայոց ձոր գաւառիս»**։ Այստեղ յիշատակություն չկա վոչ Թամարի և վոչ Զաքարեի մասին, ուստի և կարող է թյուրիմացության տեղիք տալ, թե 1212 թ. հետո է կատարվել այդ գործողությունը, յերբ մեռած եյին Թամարն ու Զաքարեն. սակայն այսպիսի առարկություն չի կարող հիմնավոր համարվել, քանի վոր Գեորգի Լաշան յուր մոր գահակից եր հռչակված արդեն նորա կենդանության ժամանակ, իսկ Սյունիքը, Վայոց ձորը, Բջնին Իվանեի տերության և գերիշխանության յենթարկված գավառներ եյին, ուր նա տեր ու տնօրեն եր և վոչ յեղբայրը Զաքարիան։*

Վայոց ձորն ամբողջապես Վասակի իշխանության մաս չեր կազմում. թեև Արատեսի արձանագրության մեջ (պատկ. 3. Հավել. Ա. 3) նա իրեն անվանում է «կողմնապահ ի Գառնոյ մինչև ի Բարգուշատ». այնտեղ շատ մեծ բաժին ունեյին Որբելյանք, և մասամբ Շահուռնեցիք, Մեհեւանյանք, իսկ Վայոց ձորի և Գառնիի մեջ էլ, Վեդիի ակունքներում ընկած եյին Մամիկոնյանց կալվածները[1]։ Որբելյանի տված մի տեղեկությամբ էլ հաստատվում է նույնը. Վասակի վորդի Պռոշ իշխանը «զիւր գաւառն և զգեղանսն որ ի Վայոց ձոր, կամէր յափշտակել և այլում եկեղեցւոյ ժառանգեցուցանել», այսինքն Յերնջակի վանքում նստող յեպիսկոպոսին[2], վորից պարզ է, թե Վայոց ձորի մի մասը միայն նորա գավառն ու գյուղերն եյին։ Տարաբաղդաբար հնարավորություն չունինք մեզ հասած աղբյուրներով, արձանագրություններ և հիշատակարաններ, վորոշել Խաղբակյանց իշխանության բովանդակ ծավալը մանրամասնություններով, այլ միայն կենդրոնները, ուր շինարարական և հոգևոր կյանք է ծաղկել, ընդհանուր գծերով։

Վայոց ձորում Պռոշյանց գլխավոր կենդրոնը Սրկղունյաց լեռներից բղխած վտակի հովիտն եր, Սրկղունք

---

* Հրատ. Էմինի. Մոսկվա. 1860. յեր. 65։
** Էմինի հրատ. Մոսկ. 1861. յեր. 181։
*** Օրբ. 397։
1 Անդ. 350. Բաջբերունի. Ար. 1888. 769։
2 Օրբ. 392։

* Օրբ. 358։
** Անդ. 397։
1 Христ. Восток. 1913. 227—232.
2 Օրբ. 364։